



Տնտեսական զարգացման և հեղափոխությունների կենտրոն

**«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ.
ՀԱՆՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ»**

Կարինե Հարությունյան
Սվետա Հարությունյան
Երևան – 2015



**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ.
ՀԻՄՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ



- Պետական քաղաքականության ծնակերպումն իրականացվում է ռազմավարությունների, հայեցակարգերի, ծրագրերի, ֆինանսական պլանների միջոցով:
- **Ըստ ժամկետայնության**
 - **ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ** - սահմանում է համապատասխան քաղաքականությունը և դրա իրականացումից ակնկալվող արդյունքները ավելի քան 5 տարիների համար:
Հեռանալային զարգացման ռազմավարական ծրագիր
 - **ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ** - սահմանում է մինչև 5 տարիների համար
Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
 - **ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ** - սահմանում է ... առաջիկա/ընթացիկ 1 տարվա համար
Պետական բյուջե



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ



- **Ըստ ընդգրկման շրջանակի կամ կարգավորման բնույթի՝**
 - **ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ** - ընդգրկում են ոլորտի մեկից ավելի ուղղություններ, հիմնականում ներկայացնում են ռազմավարական մոտեցումները, առավելապես պլանավորում են երկարաժամկետ հեռանկարը:
 - **ՃՅՈՒՂԱՅԻՆ.** ընդգրկում են ոլորտի կոնկրետ ուղղությունը, ներկայացնում են նաև մարտավարական մոտեցումները, ունեն ծրագրային բնույթ:



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ



ՀՀ 2014-2025թթ. Հեռանարային զարգացման ռազմավարական ծրագիր

- **ՀՀ-ն հանդիսանում է կառավարության գործունեության առաջնային ծրագիրը:**
- **ՀՀ-ն հիմնված է հետևյալ ռազմավարական գերակայությունների վրա՝**
 1. Զբաղվածության ընդլայնում
 2. Մարդկային կապիտալի զարգացումը
 3. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում
 4. Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ. Պետական բյուջե



- **Օրենսդիր մարմինն ունի անմիջական դեր բյուջեի ընդունման հարցում, ինչը ենթադրում է բյուջեի վրայի ընդարկումների շրջանակներում նաև ոլորտային ռազմավարությունների վերաբերյալ որոշումների կայացում:**
- **Իրականացվող հանրային ծրագրերը պետք է բխեն վարվող ոլորտային ռազմավարությունից:**
- **Ոլորտային ռազմավարությունը՝ իրենից բխող ծրագրերով, պետք է արտացոլվի բյուջեում:**
- **Աստիճանաբար բյուջեներն ընկալվում են որպես ոլորտային ռազմավարությունների փաստաթղթեր:**
- **Նախկինում բյուջեներն ընկալվում էին որպես տեխնիկական փաստաթղթեր մասնագիտական կառույցների (բյուջե պլանավորողների, կապարողների ու վերահսկողների) համար:**



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ. ՊԵՐԱԿԱՆ ԲՅՈՋԵ



Բյուջեների երկու հիմնական գործառնություններին (1և2) ավելացան նոր գործառնություններ (3և4).

1. Ֆինանսական պլան


2. Գործառնական ուղեցույց

3. Ոլորտային ռազմավարության փաստաթուղթ, այն է՝ բյուջեն պետք է հստակ նշի այն ոլորտային ռազմավարությունը և նպատակները, որոնց համաձայնվում է օրենսդիր մարմինը և որոնց պետք է հասնի գործադիր մարմինը կոնկրետ ժամանակահատվածում.

4. Հաղորդակցության միջոց, այն է՝ բյուջեն պետք է նաև պարունակի անհրաժեշտ տեղեկատվություն այնպիսի ձևաչափով, որով գործադիր և օրենսդիր մարմինները կարողանան հաղորդակցվել ինչպես միմյանց, այնպես էլ հասարակության հետ:



ՈԼՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ և ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ



Սղյուղը՝ Ծրագրային բյուջեռախմբի ընտելությունները Հայաստանում. Վերլուծական գործիքակազմ, Ա.Պողոսյան, Գ.Սիմոնյան, Երևան 2014

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ



➤ Ոլորտային ռազմավարության ուսումնասիրություն և գնահատում

Պարզելու համար, թե որքանով է այն լավ մշակված բյուջեում (մի քանի տարիների բյուջեներում) ծրագրերի տեսքով ներառվելու համար՝ արդյո՞ք հստակորեն մարնանշվում են ձեռք բերվող արդյունքները, հնարավոր է արդյոք ռազմավարությունը բաղդատել ըստ տարիների ու իրականացնող մարմինների և արդյո՞ք կիրառման առումով բավականին հստակ է մշակված միջոցառումների այն խումբը, որն անհրաժեշտ է իրականացնել հայտարարված նպատակներին հասնելու համար:

➤ Համապատասխանության վերլուծություն և գնահատում

Բացահայտելու համար, թե արդյո՞ք ընդունված ոլորտային ռազմավարություններն արտացոլված են բյուջեում և արդյոք բյուջով նախատեսված ծրագրերը/նպատակները համապատասխանում են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին և քաղաքականությունների գերակայություններին: Նաև ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշների համապատասխանությունը ծրագրի նպատակին:



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ



➤ Նպատակների հասանելիության վերլուծություն և գնահատում

Վերաբերվում է ծրագրի արդյունքների և նպատակների հասանելիության գնահատմանը: Արդյո՞ք հատկացված կամ պլանավորված ֆինանսավորման մակարդակը թույլ է տալիս հասնելու հայտարարված նպատակներին. Գնահատվում է ծրագրի իրատեսականությունը ֆինանսական, մարդկային և կառավարչական ռեսուրսների ներդրման իմաստով:

➤ Արդյունավետության վերլուծություն և գնահատում

Որքան արդյունավետ են ռեսուրսները փոխակերպվել սպասվող արդյունքների՝ քանակի, որակի և ժամկետների տեսանկյունից: Այլընտրանքային նմանադիպ ծրագրերի ծախսերի հետ համեմատական ճշգրտում:

➤ Բյուջեի կապարման վերլուծություն

Այս վերլուծությունն իրենից ներկայացնում է բյուջեի նախագծում առկա ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորված և կապարման փաստացի արժեքների համեմատությունը: Արդյոք ծրագիրն իրականացվել է ըստ պլանավորվածի (քանակական տարբերություններ, որակական խնդիրներ, ընթացակարգային և գործընթացային խնդիրներ)



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ



➤ Օգույնների եվ ծախսերի վերլուծություն

Պարզելու համար, թե որքանո՞վ է օգտակար այս կամ այն նախաձեռնությունը և արդյո՞ք դա ամենալավ ուղղությունն է ծախսեր իրականացնելու համար:

➤ Օգույնների բաշխման վերլուծություն


Վերլուծության նպատակն է պարզել, թե որքանով են հանրային ծառայությունները հասնում շահառուին:

➤ Ազդեցության վերլուծություն

Պարզելու համար, թե հանրային ծառայությունները ինչպիսի ազդեցություններ են ունեցել տարբեր շահառու խմբերի վրա՝ դրական և բացասական, առաջնային և երկրորդային, կարճաժամկետ և երկարաժամկետ, սպասվող և անսպասելի, ուղղակի և անուղղակի հնարավոր ազդեցությունների գնահատում: Նաև ինչպիսին են Ծրագրի ազդեցությունները՝ տնտեսական զարգացման, աղքատության կրճատման իմաստով:



Բյուջեի ձևավորման և կատարման մեխանիզմները



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Նպատակը



- Քննարկել բյուջետային գործընթացը և օրենսդրական կարգավորումը
- Ծանոթանալ բյուջետային փաստաթղթերի ձևաչափերին և բյուջետային ժամանակացույցին
- Քննարկել բյուջեի կատարման ասպեկտները և բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը
- Ներկայացնել ծրագրային բյուջետավորման փորձը ՀՀ-ում և ծանոթանալ Ծրագրային Բյուջետավորման գործիքակազմին
- Մեկնաբանել բյուջեների մասնակցային մոնիթորինգը և ՀԿ-ների դերը այս գործընթացում

Բյուջետային գործընթաց և օրենսդրական կարգավորում



Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու եվ կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական եվ տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Բյուջետային գործընթացը կարգավորվում է՝


- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք,
- ՀՀ պետական բյուջեի մասին օրենք,
- ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենք,
- ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներ



Բյուջետային գործընթաց և օրենսդրական կարգավորում



Բյուջետային ցիկլ



Բյուջեդային գործընթաց և օրենսդրական կարգավորում



Երբ է սկսվում

- համաձայն <<<< Բյուջեդային համակարգի մասին օրենքի>>' հոդված 6, կետ 4.
- Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը:



Բյուջեդային գործընթացի ժամանակացույց



Բյուջեի ձևավորման գործընթացը	Կատարման համար սահմանված ժամկետները/ամիս												
	<	Փ	Մ	Ա	Մ	<	<	0	Ս	<	Ն	Դ	
Պետական կառավարման մարմինների կողմից ՄԺԾԾ հայտերի մշակում և ներկայացում ՖՆ (գլխադասային մասիններն այն ներկայացնում են ինչպես ամփոփ, այնպես էլ իրենց և տվյալ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինների գծով)			01.03., ԲԳԿ-ներ՝ 6.03										
Պետական կառավարման մարմինների կողմից միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումների ներկայացում			10.03										
ՄԺԾԾ համակարգող խմբի և համապատասխան պետական կառավարման մարմինների հանդիպումներ՝ իրենց ոլորտի միջնաժամկետ ըաղաքականության փաստաթղթերի քննարկումներ անցկացնելու նպատակով (ըստ անհրաժեշտության)				05.04									
Համապատասխան ոլորտներում ծախսերի ֆինանսավորման 2013-2015 թթ. կողմնորոշիչ ցուցանիշների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների հետ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)				14.04									
Պետական կառավարման մարմինների կողմից ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ հայտերի (ծախ-սա-ֆին ռազմավարություն) ներկայացում ՖՆ (գլխադասային մարմիններն այն ներ-կա-յացնում են ներառյալ իրենց ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմինների 2013-2015 թթ. ֆինանսավորման կողմնորոշիչ ցուցանիշների վերաբերյալ առաջարկությունները)				28.04	Մինչև 14.05								
Պետական կառավարման մարմինների կողմից իրենց և համակարգի բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով) կազմում և ներկայացում ՖՆ								Մինչև 04.08					
ՖՆ քննարկումներ և ներկայացում ԱԺ													
ԱԺ-ում քննարկումներ և բյուջեի հաստատում													



Բյուջեդային դասակարգումներ



Բյուջեի մշակման, կատարման և հաշվետվության փուլերում ընդունված է առաջնորդվել որոշակի ընդունված դասակարգումներից, որոնք թույլ են տալիս տեղեկատվությունը խմբավորել ըստ տարբեր նշանակության:

- ▶ **Տնտեսագիտական**
- ▶ **Գործառնական**
- ▶ **Գերատեսչական**
- ▶ **Ծրագրային**

Առանձնացվում են հետևյալ հասկացությունները՝ Բաժին, Խումբ, Դաս, Ծրագիր: Սրանք կիրառվում են արտահայտելու համար պետական ծախսերն ըստ ոլորտների և գործառույթների:



Բյուջեդային դասակարգումներ



ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Բյուջեի **տնտեսագիտական դասակարգումը** ցույց է տալիս, թե հանրային ծառայությունների արտադրության համար ինչ տեսակի ռեսուրսներ են օգտագործվում:

Համաձայն տնտեսագիտական դասակարգման բյուջեի ծախսերը դասակարգվում են՝

Ընթացիկ ծախսեր

- Աշխատավարձ
- Տոկոսավճար
- Տրանսֆերտներ
- Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում

Կապիտալ ծախսեր

Կիրառությունը

Ծրագրերի կատարման այլընտրանքների վերլուծություն



Բյուջեդային դասակարգումներ



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Բյուջեի **գործառական դասակարգումը** ցույց է տալիս, թե հանրային հատվածի հիմնական գործառույթների (ֆունկցիաների) համար հանրությունը որքան ռեսուրս է տրամադրել

Օրինակ՝

Կրթություն

- Հանրակրթություն
- Բարձրագույն կրթություն
- ...

Պաշտպանություն

-
- Առողջապահություն
- Արտահիվանդանոցային ծառայություններ
- Հիվանդանոցային ծառայություններ
-

Կիրառությունը.

- Միջազգային համադրումներ
- Ոլորտային քաղաքականության քննություն

Բյուջեդային դասակարգումներ



ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Բյուջեի **գերատեսչական դասակարգումը** խմբավորում է բյուջեի ծախսերն ըստ պատասխանատվության բաշխման, այսինքն՝ ցույց է տալիս, թե որ գերատեսչությունն է պատասխանատու հանրային այս կամ այն բարիքների արտադրության և միջոցների օգտագործման համար:

Օրինակ՝

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

- Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՊՈԱԿ
- ՀՀ ազգային արվեստի ստեղծման ծրագիր - 43 մլն դրամ...
- ...

ՀՀ նախագահի աշխատակազմ

- Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ
- Ծխախոտի դեմ պայքարի ազգային ծրագիր
- ...

Կիրառությունը.

- Իրավական ամրագրում
- Կազմակերպական պատասխանատվություն

Բյուջեային դասակարգումներ



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Բյուջեի **ծրագրային դասակարգումը** խմբավորում է հանրային հատվածի ծառայություններն ըստ որոշակի նպատակների:

Օրինակ՝

Միջնակարգ դպրոցների աջակցության ծրագիր

- Մեթոդական օգնություն
- Դասարանային ժամեր
- Արտադասարանական ժամեր

Հատուկ կրթության ծրագիր

- Հատուկ կարիքներով երեխաներ
- Տաղանդավոր երեխաներ

Կիրառությունը

- **Նպատակների և խնդիրների սահմանում և հստակություն**
- **Արդյունքների գնահատում**



Վարժություն



Նկարագրել, թե նշվածները բյուջեի որ դասակարգումներում կարող են զերեղված լինել

- ▶ Ռազմական պաշտպանություն
- ▶ Աշխատանքի վարձատրություն
- ▶ Ստոմոլոգիական ծառայություններ
- ▶ Գործուղումների և շրջագայությունների ծախսեր
- ▶ Դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին
- ▶ Մշակութային ծառայություններ
- ▶ Սոցիալական ապահովության նպաստներ
- ▶ Շենքերի և շինությունների ձեռքբերում
- ▶ Վարչական սարքավորումներ
- ▶ Հեռուստառադիոհաղորդումներ
- ▶ Նախադպրոցական կրթություն
- ▶ Գործազրկություն և այլն



ՀՀ պետական բյուջեի մասին օրենք. կառուցվածքը



ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման:

Հավելված 1. Պետական բյուջեի ծախսերն ըստ տարբեր դասակարգումների

Հավելված 2. Հաշվետվություն ըստ ՀՀ առանձին համայնքների տրամադրվող դոտացիաների վերաբերյալ

Հավելված 3. Հաշվետվություն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2013 թվականի ծախսերի կատարման վերաբերյալ

Հավելված 4. Դեֆիցիտի ֆինանսավորում

Հավելված 5. Բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ <<համայնքներին սուբվենցիաների տրամադրում>> ծրագրի շրջանակներում սուբվենցիաներ ստացող համայնքների վերաբերյալ

Հավելված 6. ՀՀ կենտրոնական բանկի 2015 թվականի վարչական ծախսերի նախահաշիվ

Հավելված 7. Ռադիոհաճախականության օգտագործման վճարների, թույլտվության տրամադրման պարտադիր վճարների՝ 2015 թվականի համար սահմանված չափերը



ՄԺԾԾ. կառուցվածքը



2015-2017 թթ. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

- ▶ **Հավելված 1.** Համառոտ ակնարկ ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ կանխատեսումներում առկա ռիսկերի մասին
- ▶ **Հավելված 2.** ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում նախատեսվելիք օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում վարկերի տրամադրմանն ուղղվող միջոցներ
- ▶ **Հավելված 3.** ՀՀ պետական բյուջեի հաշվին կատարվող ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները՝ ըստ պետական կառավարման մարմինների
- ▶ **Հավելված 4.** Պետական մարմնի կողմից իրականացվող ամփոփ ծախսերը (քաղաքականության միջոցառումները) ծրագրային դասակարգմամբ



Բյուջեի կապարում



- ▶ Բյուջեի կապարումը՝ դա պետական ֆոնդերի պարզապես հավաքումը, բաշխումը և հաշվետվությունը չէ:
- ▶ Կապարումը թեև ֆինանսական է, սակայն իմաստը Ծառայությունների մատուցումն է:
- ▶ Կապարման վրա ազդում են մի շարք գործոններ՝ գործնականում հազվադեպ է, որ բյուջեն կապարվում է այնպես, ինչպես պլանավորված է:
- ▶ Պլանավորման փուլը շատ կարևոր է. Լավ բյուջեն հնարավոր է վատ կապարել, Վատ բյուջեն հնարավոր չէ լավ կապարել:



Բյուջեի կապարում



Առանձնացվում են բյուջեի կապարման երեք ասպեկտներ.

- ▶ **Քաղաքական կապարում**
- ▶ **Ֆինանսական կապարում**
- ▶ **Ծրագրային կապարում**





Ֆինանսական կարարում

- ▶ Եկամուտների հավաքագրում
- ▶ Ծախսերի կատարում, ներառյալ պարտքի սպասարկում
- ▶ Ֆինանսական ռեսուրսների փոխառում
- ▶ Մուտքների և ծասերի հաշվառում
- ▶ Ֆինանսական հաշվետվությունների կազմում
- ▶ Կանխիկ հոքերի կառավարում
- ▶ Աուդիտ
- ▶ Եկամուտների և ծախսերի կանխատեսում



Քաղաքական կարարում

- ▶ Դեֆիցիտի կառավարում
- ▶ Ֆինանսական ճգնաժամեր (եկամտային և այլն)
- ▶ Առաջացող խնդիրներ- Կառավարության գործելակերպը
- ▶ Ներքին ֆինանսական խնդիրներ
- ▶ Պահուստային ֆոնդ
- ▶ Միջազգային հարաբերություններ





Ծրագրային կապարում

- ▶ **Ապրանքների և ծառայությունների գնում**
- ▶ **Ծրագրի կառավարում և հաշվետվություն**
- ▶ **Կառավարման վերահսկում**
- ▶ **Գնահատում**



Բյուջեի կապարման մասին տարեկան հաշվետվությունը

- ▶ Կազմում է ԱԺ ներկայացվող բյուջեի տարեկան հաշվետվության մաս (ընդունվում է ԱԺ կողմից)
- ▶ Հիմք է հանդիսանում ներքին եւ արտաքին աուդիտի առավել ուշադիր քննության համար
- ▶ Նախատեսված է նաեւ քաղաքական եւ ոչ կառավարական ընթերցողի համար (համապատասխանաբար ենթադրում է ռճական փոփոխություններ՝ ներառելով նկարագրություն եւ արդյունքի վերլուծություն)
- ▶ Ներկայացվում է ավելի ուշ ժամկետներում քան եռամսյակային հաշվետվությունները



Տարեկան հաշվեքվության կառուցվածքը



- ▶ ՀՀ պետական բյուջեի եկամուտներ
- ▶ ՀՀ պետական բյուջեի ծախսեր
- ▶ ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտ
- ▶ Հավելվածներ
- ▶ Տեղեկանքներ
- ▶ Տեղեկատվություն ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին



Պետական մարմինների կողմից ներկայացվող բյուջեի կատարման հաշվեքվության կառուցվածքը



- ▶ Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար
- ▶ Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի
- ▶ ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար
- ▶ Փաստացի ցուցանիշը
- ▶ Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը
- ▶ Տարբերության պատճառը
- ▶ Ծրագրի ընթացիկ կառավարմանն ուղղված նախատեսվող միջոցառումները
- ▶ Տարբերության պատճառը
- ▶ Ծրագրի ցուցանիշների ընթացքի ազդեցությունը ՀՀ կառավարության նպատակների վրա
- ▶ Պլանավորվող գործողություններ՝ ծրագրի նախատեսվող / ցանկալի արդյունքներից (նպատակներից) տարբերությունը շտկելու համար
- ▶ Պլանավորվող գործողության ժամկետը (սկիզբ - ավարտ)



**ՊՄ Կարեկան ծրագրի կատարման մոնիթորինգի
աղյուսակ (կրճատված)**



Չափորոշիչը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ			
	Ցուցանիշի կանխատեսումը	Փաստացի ցուցանիշը	Տարբերությունը	Տարբերության պատճառը
	1	4	5	6
Չափորոշիչը	Ֆինանսական ցուցանիշներ (հազ. դրամ)			
	Ցուցանիշի կանխատեսումը	Փաստացի ցուցանիշը	Տարբերությունը	Տարբերության պատճառը
	7	10	11	12
Չափորոշիչը	Ծրագրի ընթացիկ կատարմանն ուղղված նախատեսվող միջոցառումները			
	Ծրագրի ցուցանիշների (այ.5, այ.11) ընթացքի ազդեցությունը ՀՀ կառավարության նպատակների վրա	Պլանավորվող գործողությունը՝ ծրագրի նախատեսվող (ցանկալի) արդյունքներից (նպատակներից) տարբերությունը շտկելու համար	Պլանավորվող գործողության ժամկետը (սկիզբ-ավարտ)	
	13	14	15	

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Ծախսային և ծրագրային բյուջեներ



Ի՞նչ է ծախսային բյուջեն

Ծախսային բյուջեն ըստ ծախսատեսակների դասակարգված ֆինանսական փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ գումարներ կծախսվեն կամ ծախսվել են յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով: Ծախսային բյուջեն համարվում է բյուջեի պարզագույն տեսակ:

Ուշադրությունը կենտրոնացված է միայն հետեվյալ հարցերի վրա՝ ի՞նչ է գնվել, ինչքա՞ն է ծախսվել, ինչի՞ համար:

Ծախսերը դասակարգվում են ըստ խմբերի, օրինակ՝ աշխատավարձ, տրանսֆերտներ, սուբսիդիաներ, ձեռքբերված ապրանքներ ու ծառայություններ եվ այլն:

Ծախսային բյուջեների դեպքում հրանարավոր է վերահսկել միայն ապրանքների ու ծառայությունների գնման համար պլանավորված եվ փաստացի ծախսված գումարները:



Ծախսային և ծրագրային բյուջեներ



Ի՞նչ է ծրագրային բյուջեն

Ծրագրային բյուջեն ուղղված է կառավարության կամ համայնքի գործունեության արդյունքների ապահովմանը: Այն ցույց է տալիս, թե ինչ արդյունք ձեռք կբերվի տվյալ աշխատանքը կատարելիս կամ բյուջետային ծրագիրն իրականացնելիս եվ ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրի քանակական արդյունքների ձեռքբերման համար:

Ծրագրային բյուջեն պատասխանում է հետեվյալ հարցերին.

- Ի՞նչ արդյունքներ ձեռք կբերվեն,
- Ի՞նչ ազդեցություն կլինի հասարակության վրա,
- Ի՞նչ ազդեցություն կլինի սպառողների վրա,
- Որքա՞ն գումար կծախսվի տվյալ ծառայությունը տվյալ նպատակով մատուցելու վրա:





Ծրագրային բյուջեավորման առավելությունները

Չի փոխվում բյուջեի էությունը, պարզապես բարելավվում է տեղեկատվությունը

- ▶ Մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկության և հաշվետվողականության կարևորում
- ▶ Ոչ ֆինանսական արդյունքների կարևորում
- ▶ Կենտրոնացում նպատակների, կարիքների և հնարավորությունների վրա
- ▶ Ռեսուրսների օգտագործման արդյունավետություն
- ▶ Համակարգված և արդյունավետ կառավարում և վարչարարություն
- ▶ Իրականացվող քաղաքականությունների հետևանքների հստակություն
- ▶ Ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև տեսանելի կապի ձևավորում



ԾԲ միջազգային փորձը

- ▶ Բարձրացրել է կառավարման որակը և մեծացրել է ծրագրերի սոցիալական և հասարակական արդյունավետությունը,
- ▶ Բարելավել է պետական ծառայության կառավարման մշակույթը և արդյունքները,
- ▶ Գոյություն չունի ներդրման ստանդարտ մոտեցում կամ մոդել, ոչ էլ քայլերի պարտադիր հերթականություն,
- ▶ Հաճախ ցանկալի է ներմուծել աստիճանաբար և պրագմատիկ ձևով,
- ▶ Կարող է արդյունավետ գործել նույնիսկ պետական կառավարման քնազավառում էական բացեր ունեցող երկրներում:



ԾԲ բարեփոխումները Հայաստանում



- ▶ Առաջին քայլերն իրականացվել են (2002-2005թթ.) ՄՀԲ-ի “Հայաստանում ՄԺԾԾ օժանդակություն” ծրագրի շրջանակներում: Նախնական փորձեր:
- ▶ “Հայաստանում ԾԲ ընդլայնում” (2005-2008թթ.) Մեթոդաբանության մշակում, փորձնական կիրառում՝ 4 նախարարություններում:
- ▶ Մեթոդաբանության ճշգրտում և տեղայնացում, ծրագրային դասակարգման ներդրում՝ 4+10+64 պետական մարմիններում (2009-2012թթ.):
- ▶ ԾԲ իմպերատիվ կիրարկում:



ԾԲ. Բյուջերային դասակարգման կառուցվածքը



- ▶ **Առկա է դասակարգումների երկու մակարդակ**
 - ▶ *Քաղաքականության միջոցառումներ*
 - ▶ *Ծրագրեր*
- ▶ Ծրագիրը միմյանց հետ փոխկապակցված այնպիսի քաղաքականության միջոցառումների խումբ է, որոնք նպաստում են նույն վերջնական արդյունքի ապահովմանը (հասարակության բարեկեցությանը):
- ▶ Քաղաքականության միջոցառումը այն կոնկրետ միջամտությունն է, որն իրականացնում է պետական մարմինը, որպես միջոց կառավարության առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար:



Քաղաքականության միջոցառումներ



- Քաղաքականության միջոցառումները բյուջեի նոր ձևաչափի հիմնաքարն են
- ԱԺ-ն հաստատելու է հատկացումները քաղաքականության միջոցառման մակարդակում
- Քաղաքականության միջոցառման մակարդակում են սահմանվում ծառայությունների (ուղղակի արդյունքների) ցուցանիշները
- Քաղաքականության միջոցառումները կարելի է շաղկապել կառավարության նպատակներին (վերջնական արդյունքներին)
- Տարաբնույթ ծառայությունները պետք է ներառվեն տարբեր քաղաքականության միջոցառումներում
- Յուրաքանչյուր քաղաքականության միջոցառում պետք է ներառվի միայն մեկ ծրագրում:



ԾԲ հավելվածի կառուցվածքը



ԾԲ հավելվածում ծրագրերն ու քաղաքականության միջոցառումները ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ.

- ▶ Ընթացիկ
- ▶ Հանրային սեփականության կառավարման
- ▶ Կապիտալ
- ▶ Ֆինանսավորման





Վարժություն


Նկարագրել, թե նշված միջոցառումները ծրագրային բյուջեւորվորման հավելվածի որ մասում պետք է ներառել,

- ▶ Պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգում
- ▶ ՀԿ-ների հեղուկ համալուծ անվտանգային տարածքներում ուսումնասիրությունների և դիտարկումների անցկացում
- ▶ Առևտրի և տնտեսական զարգացման բնագավառում քաղաքականության մշակում
- ▶ Արտաքին վարկերի փոխադրումների վճարում
- ▶ ՀՀ Շիրակի մարզպետարանի վարչական շենքի հիմնանորոգում
- ▶ Տարրական ընդհանուր կրթության տրամադրում,
- ▶ Հայկական երկաթուղու վերակառուցվող կամուրջների տեխնիկական վերահսկողություն
- ▶ Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ և այլն



Ծրագրի կադարողական չափորոշիչները





Ցուցանիշների հապկությունները



- ▶ Համապարփակ
- ▶ Իմաստալից և օգտակար
- ▶ Հստակ
- ▶ Չափելի և ստուգելի
- ▶ Վերահսկելի
- ▶ Իրատեսական և իրագործելի
- ▶ Համեմատելի
- ▶ Պատշաճ վարքագիծ խրախուսող
- ▶ Կարևոր
- ▶ Ֆինանսապես արդյունավետ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ



Ինչ է մոնիթորինգը



- ▶ **Մոնիթորինգը ծրագրերի արդյունքների եւ գործընթացի ցուցանիշների համակարգված չափագրումը և հաշվառումն է։ Այն պատասխանում է՝ որքան, ով, ինչ, որտեղ, երբ եւ որքան լավ հարցերին, ի տարբերություն գնահատման, որը պատասխանում է՝ որքան լավ, ինչու, ինչպես բարելավել հարցերին։**
- ▶ Մոնիթորինգը աջակցում է խնդիրների բացահայտմանը
- ▶ Մոնիթորինգը թույլ է տալիս ստանալ հետեւյալ հարցերի պատասխանները.
 - ▶ Որքան շահառու ունի ծրագիրը
 - ▶ Յուրաքանչյուր ծառայության (միջոցառման) տեսակի գծով ինչ ծավալի ծառայություններ են մատուցվում շահառուներին
 - ▶ Արդյոք ՊՄ աշխատակիցները (կամ այլ կատարող մարմինները) պատշաճ կատարում են իրենց աշխատանքը։
 - ▶ Որքան ֆինանսական ռեսուրսներ են ծախսվում այդ ուղղությամբ։
 - ▶ Որքան այլ ռեսուրսներ են ծախսվել այդ ծրագրի իրականացման համար։



Ինչ ենք հասկանում մասնակցություն ասելով



- ▶ **Մասնակցություն** ասելով հասկանում ենք փոխադարձ համագործակցություն և փոխազդեցություն կառավարման մարմինների և քաղաքացիների միջև։
- ▶ Մասնակցության պարագայում քաղաքացիները որոշակի դերակատարում են ունենում քաղաքականության ուղղությունների որոշման գործում, կառավարման մարմիններին հաշվի են առնում հասարակության բոլոր պահանջները, առաջարկները, կարծիքները։





Ովքե՞ր են մասնակցային գործընթացի մասնակիցները

- կառավարման մարմինները՝
- ▶ Պետական կառավարման մարմինները,
- ▶ Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը),
- հասարակությունը՝
- ▶ Անհատ քաղաքացիները,
- ▶ Քաղաքացիական հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ, ՀԼՄ-ներ, ասոցիացիաներ, արհմիություններ և այլն),
- շահառու այլ կազմակերպությունները (օր.
Միջազգային կազմակերպություններ)



Մասնակցային գործընթացի մեխանիզմները

- ▶ Տեղեկատվության տրամադրում և մատչելիություն (օր.՝ տարեկան բյուջեի հրապարակում, քաղաքացու դիմումի հիման վրա տեղեկությունների տրամադրում)
- ▶ Խորհրդատվություն և հետադարձ կապ (օր.՝ հարցումների իրականացում, դիմում-բողոքների ուսումնասիրում)
- ▶ Ակտիվ մասնակցություն՝ քաղաքացիների ակտիվ ներգրավում (մեզ հետաքրքրող հիմնական մեխանիզմը)



Ի՞նչ ենք հասկանում բյուջեների մասնակցային մոնիտորինգ ասելով



- ▶ Բյուջեների մասնակցային մոնիտորինգը մի գործընթաց է, որում քաղաքացիներն ու ՀԿՆ-երը ուղղակիորեն մասնակցում են բյուջեի մշակման, որոշումների ընդունման և բյուջեի կատարման տարբեր փուլերի մոնիտորինգային աշխատանքներին:



Ի՞նչ օրենքներով է ապահովվում մասնակցային մոնիտորինգի գործընթացը Հայաստանում



- ▶ ՀՀ Սահմանադրություն (հոդված 40)
- ▶ ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենք (հոդվածներ 9, 20)
- ▶ ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք (հոդվածներ 3, 8, 27, 36)
- ▶ ՀՀ տեղական հանրաքվեի մասին օրենք





ՀՀ Սահմանադրություն

- ▶ Հոդված 27.1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատասխան ստանալու իրավունք: **Տեղեկատվության տրամադրում և մատչելիություն**
- ▶ Հոդված 30. Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:
- ▶ Հոդված 107. Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով:



ՀՀ բյուջերային համակարգի մասին օրենք

- ▶ Հոդված 3. ՀՀ բյուջերային համակարգը
կեր 3. Բյուջերային համակարգի սկզբունքները՝
 - ▶ ը) բյուջեների հրապարակայնություն
- ▶ Հոդված 8. Բյուջերային համակարգի հիմքում դրվող սկզբունքները
կեր 8. Բյուջեների հրապարակայնության սկզբունքը նշանակում է՝
 - ▶ ա) հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը մամուլում (սույն օրենքի 26-րդ, 36-րդ հոդվածների պահանջներին համապատասխան), բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն
 - ▶ բ) բյուջեների նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկություն հասարակության և զանգվածային լրատվության միջոցների յիմար: Ի տարբերություն համայնքների բյուջեների, պետական բյուջեի կազմում կարող են հաստատվել գաղտնի հոդվածներ:



Ինչո՞ւ է անհրաժեշտ մասնակցային մոնիթորինգի ներդրումը



- ▶ Խթանել ազգաբնակչության գրագիտությունը և հանրային հատվածում ակտիվ մասնակցությունը
- ▶ Հասնել սոցիալական արդարության՝ բարելավելով քաղաքականությունները և ռեսուրսների տեղաբաշխումը
- ▶ Բարեփոխել վարչական ապարատը



Ո՞րն է ՀԿՆ-երի դերը մասնակցային մոնիթորինգի գործընթացում



- ▶ Բյուջեի ձևավորման և կատարման գործընթացներում սոցիալական բոլոր խավերի ընդգրկում
- ▶ Սոցիալական հաշվետվողականություն
- ▶ Ավելի լավ պլանավորում և կառավարում
- ▶ Վստահության բարձրացում և հանրային կառավարման բարելավում



Ի՞նչ պատասխանատվություն է ենթադրում բյուջեի մասնակցային մոնիտորինգը



- ▶ Մասնակցային մոնիտորինգի պարագայում երկրի զարգացման և բարեկեցության համար պատասխանատվություն են կրում ոչ միայն վարչապետը կամ ազգային ժողովը, այլև հանրության անդամներն ու ԲՀԿ-ները:



- ▶ ***Շնորհակալություն***

